կայանայ պատմական վայրեր, որք լերանս կողերուն վերայ զետեղուած են, Կապուտայ բերդն և բերդաւոր անտառն ի հիւսիս արևմուտս ի խոնարհ, Կալոյի գիւղ և ձորն ի հարաւ արևմուտս, Վարդէհէր կամ Վարդիկ հօր վանք և ուխտատեղին սարկաւագներու ի հիւսիս արևելս։ Մեզմէ 1 ժամ արևելս տարածուած է Արզի և Փոխ-Հուրդ վրանաբնակներու վարատեղիքն։ Մերձեցանք այս գագաթան հիւսիսային ծայրն, լաւ ևս Վիշապաձորի և Կապուտայ Ջրի հովիտները բաժանող բարձրութեան վերայ կանգնեցանք, ուղղուած ենք ի հիւսիս, մեր արևելեան հիւսիսն ի վայր կը պարզուի ամբողջ Վիշապաձորի հովիտը։

Վիշապաձորս քանի խորախոր ձորերէ կազմուած է, մեծ Ջրի յարևելս շատ բարձր դիրքի մի վերայ կանգնած է Վարդէհօր վանքն՝ շրջապատուած դժուարամատչելի ահագին ժայռերով, որք շարունակութիւն են ի հիւսիս արևմուտս խոնարհած Զամչա մեծ լերին։ Վարդէհօր վանքի մէկ ժամ հարաւն Սարկաւագներու ուխտատեղին։ Վանքի արևելս բարձր սարի մի վերայ Ս. Մամասայ ուխտատեղին, իսկ արևմտեան հիւսիսն, որպէս ասացինք, կը տեսնուի Կապուտայ ընդարձակ հովիտը և Ջրի ձախ ափի վերայ չափազանց բարձրացած քարաշերներն, ուր և կայ հինաւուրց յաղթանդամ ծառներով զարդարուած անտառ մի լերան գագաթն, որ և բազմաթիւ սրտաճմլիկ անցքերու հանդիսատես եղած է. այս լերան վրայէն կերևան Սողանլուի հռչակաւոր անտառներն, որք տարածուած են յայնկոյս Երասխայ։

Արդէն մեր ուղին շարունակելով տակաւ առ տակաւ կը խոնարհինք, ճանապարհը վտանգաւոր է ձիա-